

## ՀՕՄԻ Նոր Մասնաճիւղ Կը Հիմնուի Հիւսիսային Սան Ֆերնանտո Հովիտին Մէջ



ՆՈՐԹ ՀԻԼՁ, ՔԱԼԻՖ.- Մարտ 17, 2011ին հիւսիսային Սան Ֆերնանտո հովիտի շրջանին մէջ հիմը դրուեցաւ Հայ Օգնութեան Միութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի 27րդ մասնաճիւղին, որ անուանուեցաւ «Լորի»: Տասնետօրը հոգի իրենց երդումը տալով՝ միացան ՀՕՄԻ շարքերուն եւ հիմնեցին նոր մասնաճիւղը: ՀՕՄԻ շրջանային վարչութեան ատենապետուհի Արուսեակ Մելքոնեանը նոր մասնաճիւղին կնքամայրն էր:

ՀՕՄԻ կեդրոնական վարչութեան ատենապետուհի Վիքի Մարաշլեան, շրջանային եւ մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ, շրջակայ մասնաճիւղերէն ՀՕՄուհիներ, ինչպէս նաեւ ՀՅԴ «Արշալիր Շիրակեան» կոմիտէի անդամներ ներկայ եղան յուզիչ արարողութեան, որմէ ետք նոր մասնաճիւղի անդամները իրենց անդրանիկ ժողովը գումարեցին եւ 7 հոգինոց վարչական կազմ մը ընտրեցին:

ՀՕՄԻ շրջանային վարչութեան փոխ-ատենապետուհի Նայիրի Տերտերեան ծրագրի բացումը կատարեց Սրբոց Նահատակաց Մարի Գապայեան Նախակրթարանի (Ֆերահեանի Փարթինիա բաժանմունքի) սրահին մէջ: Ժպտերես նոր անդամուհիները շարուեցան իրենց մոմերով եւ իրենց կնքամօր հետեւելով արտասանեցին ՀՕՄԻ երդումը, մինչ անելի քան 50 ՀՕՄԻ եւ ՀՅԴ անդամները, ներառեալ իրենց մայրերը, ընտանեկան պարագաները եւ նոյնիսկ ամուսինները կը դիտէին զիրենք:

Ատենապետուհի Մելքոնեան իր պատգամը փոխանցելով նոր անդամներուն ներշնչեց հպարտանքով եւ թէ՛ պատասխանատուութեան զգացումով՝ շեշտելով կարեւորութիւնը երդման արարողութեան, որուն շնորհիւ իրենցմէ իւրաքանչիւրը կը միանայ ազգանուէր միութեան շարքերէն ներս իբրեւ «ՀՕՄի Սուրբ գործի» առաքելութեան ջատագովներ: Ան նորագիրներուն բարի գալուստ մաղթեց ՀՕՄի մեծ ընտանիքէն ներս:

Ապա, կեդրոնական վարչութեան ատենապետուհի Մարաշլեան քաջալերական խօսքեր փոխանցեց նոր մասնաճիւղի անդամներուն: Ան իր խօսքին հետ նաեւ կատարեց խրախուսական նուիրատուութիւն մը, որով բացումը կատարուեցաւ այլ նուիրատուութեանց: Խօսք առին եւ իրենց նուիրատուութեամբ նոր մասնաճիւղին խրախուսանք տուին ՀՕՄի «Անահիտ» (Ման Ֆերնանտո Հովիտ), «Արագ» (Պըրպէնք) եւ «Սիփան» (Կլենտէյ) մասնաճիւղերու վարչութիւններու ատենապետուհիները՝ Միմի (Արմէնուհի) Թովմասեան, Անի Չալեան եւ Քրիսթին Յովնանեան, ինչպէս նաեւ ՀՅԴ Արշալիր Շիրակեան կոմիտէի ներկայացուցիչ Վաչէ Տօնոյեան:

Կոմիտէութիւնը նաեւ յանձն առած էր երեկոյի հիւրասիրութիւնը: Հանդիսութեան աւարտին, ՀՕՄի նորաստեղծ «Լոռի» մասնաճիւղի անդամուհիները առաջին անգամ ըլլալով ձեռք-ձեռքի տալով մեծ ուրախութեամբ կտրեցին իրենց մասնաճիւղի ծննդեան կարկանդակը:

Կը սպասուի որ մասնաճիւղին շուտով միանան նոր անդամներ, ուռճացնելով անոր շարքերը այն հաւաստիացումով, որ ան արդէն իսկ ճամբայ ելած է ՀՕՄի բարեսիրական եւ ազգօգուտ ծրագիրները իրականացնելու:

ՀՕՄի «Լոռի» Մասնաճիւղի վարչութեան կազմի անդամներն են Անի Պոսթանեան, Մարիա Թոթրեան, Արշօ Աւագեան, Մարալ Խոտանեան, Սօսի Խաչատուրեան, Իսկուհի Թովճեան, Անահիտ Ազայեան: Մասնաճիւղին հետ առայժմ կապ կարելի է պահել հեռաձայնելով 818-800-7612 թիւին կամ գրելով [annieboar@yahoo.com](mailto:annieboar@yahoo.com) հասցէին

: